

# ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ




## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|   |    |
|---|----|
| <b>1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ</b> .....  | 1  |
| 1.1. Արդյունաբերություն .....           | 2  |
| 1.2. Շինարարություն .....               | 3  |
| 1.3. Ծառայություններ .....              | 4  |
| 1.4. Առևտուր .....                      | 5  |
| <b>2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ</b> .....        | 5  |
| <b>3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ</b> .....              | 7  |
| <b>4. ՓՈԽԱՐԺԵՔ</b> .....                | 8  |
| <b>5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ</b> ..... | 10 |
| 5.1. Բյուջեի եկամուտները .....          | 10 |
| 5.2. Բյուջեի ծախսերը .....              | 12 |
| 5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը .....   | 13 |
| 5.4. Պետական պարտք .....                | 13 |
| <b>6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ</b> .....       | 14 |
| 6.1. Գնաճ .....                         | 14 |
| 6.2. Ավանդներ .....                     | 15 |
| 6.3. Վարկեր .....                       | 16 |
| 6.4. Դրամական փոխանցումներ .....        | 18 |
| <b>7. ԱՄՓՈՓՈՒՄ</b> .....                | 19 |

## 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Արդի աշխարհաքաղաքական իրադարձությունները դրական ազդեցություն են ունենում ՀՀ տնտեսության վրա՝ հանգեցնելով տնտեսական ակտիվության աճի արագացմանը: Վերջինս ակնհայտորեն արտացոլվել է հունիս ամսվա ցուցանիշներում: Այսպես, տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) հունիսին կազմել է 18.5%՝ մայիսի համեմատ արագանալով շուրջ 5.5 տոկոսային կետով: Հունվար-հունիս ամիսների ՏԱՑ-ը կազմել է 11.8%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.6 տոկոսային կետով:


**Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %**



2022թ. հունվար-հունիս ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների և առևտրի աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր ՏԱՑ-ին կազմել են համապատասխանաբար 5.6 և 4.0 տոկոսային կետ: Էականորեն աճել է նաև արդյունաբերության նպաստումը՝ նախորդ ամսվա 0.7 տոկոսային կետից դառնալով 1.5 տոկոսային կետ:


Գյուղատնտեսության ոլորտը շարունակում է անկում ապրել: Ընթացիկ տարվա հունվար-հունիս ամիսներին գյուղատնտեսության անկումը կազմել է 5.5%, ինչը 0.6 տոկոսային կետով հակազդել է ընդհանուր ՏԱՑ-ի աճին:

## Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2022թ. հունվար-հունիսին, տոկոսային կետ



### 1.1. Արդյունաբերություն

## Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը<sup>1</sup>, %



**Նախորդ ամիսներին ցածր աճերից հետո արդյունաբերության ոլորտում գրանցվել է աճի թռիչքաձև արագացում:** Արդյունաբերության ոլորտի իրական թողարկման աճը 2022թ. առաջին հինգ ամիսների ընթացքում միջին հաշվով կազմում էր 3.4%, իսկ հունիսին հասել է 19%-ի: Դրա հետևանքով հունվար-հունիս

<sup>1</sup> Արդյունաբերության նախորդ ամիսների ցուցանիշը վերանայվել է ՀՀ ՎԿ-ի կողմից, ինչի արդյունքում հունվար ամսվա ցուցանիշը բարելավվել, իսկ մարտի ցուցանիշը վատթարացել է 0.1 տոկոսային կետով, ինչպես նաև նույն չափով բարելավվել են հունվար-մարտ, հունվար-ապրիլ և հունվար-մայիս ամիսների ցուցանիշները:


ամիսների աճի տեմպը հասել է 5.8%-ի՝ հունվար-մայիսի համեմատ արագանալով շուրջ 3 տոկոսային կետով:

2022թ. հունվար-մայիս ամիսների տվյալներով<sup>2</sup> արդյունաբերության աճը պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության շուրջ 10.6% աճով, որի նպաստումն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է 6.0 տոկոսային կետ: Հանքարդյունաբերության ոլորտում արձանագրվել է 12.1% անկում, ինչն ընդհանուր արդյունաբերության աճին հակազդել է 3.4 տոկոսային կետով:

Արդյունաբերության աճին նպաստել է նաև «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղի աճը՝ շուրջ 0.1 տոկոսային կետով, իսկ «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաճյուղի նպաստումը եղել է գրոյական:

## 1.2. Շինարարություն

**Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %**




**Շինարարության ծավալների աճի տեմպը փոքր-ինչ դանդաղել է:** Շինարարության աճն ընթացիկ տարվա հունիսին կազմել է 16.7%՝ մայիսի համեմատ դանդաղելով 1.4 տոկոսային կետով: Սակայն, կուտակային՝ հունվար-հունիս ամիսների աճի տեմպը շարունակել է արագանալ՝ կազմելով 12.7%:

<sup>2</sup> 2022թ. հունվար-հունիս ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

### 1.3. Ծառայություններ

**Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %**




Ներկա աշխարհաքաղաքական իրավիճակով պայմանավորված՝ ՌԴ քաղաքացիների ներհոսքը Հայաստան էական դրական ազդեցություն է ունենում ծառայությունների ոլորտի վրա: 2022թ. հունիսին ծառայությունների աճը կազմել է 35.5%՝ մայիսի համեմատ արագանալով 5.3 տոկոսային կետով, իսկ հունվար-հունիս ամիսների աճը կազմել է 26.9%՝ արագանալով 2.0 տոկոսային կետով:

2022թ. հունվար-մայիս ամիսների տվյալներով<sup>3</sup> ծառայությունների աճը առավելապես պայմանավորված է «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», «տեղեկատվություն և կապ» և «տրանսպորտ» ենթաճյուղերի աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 7.8, 4.9 և 4.5 տոկոսային կետ:

<sup>3</sup> 2022թ. հունվար-հունիս ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

## 1.4. Առևտուր


**Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %**



Առևտրի ոլորտի աճի տեմպը նույնպես որոշակիորեն արագացել է՝ պայմանավորված ՌԴ քաղաքացիների ներհոսքի աճով: 2022թ. հունիսին առևտրի աճի տեմպը կազմել է 18.2%՝ մայիսի 12.4%-ի դիմաց արագանալով 5.8 տոկոսային կետով: Հունվար-հունիս ամիսների առևտրի աճի տեմպը ևս արագացել է՝ կազմելով 10.7%:

## 2. ԱՐՏԱԲԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

**Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ<sup>4</sup>, %**




<sup>4</sup> ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները, ինչի արդյունքում 2022թ. ապրիլ ամսվա ցուցանիշը բարելավվել է 0.1 տոկոսային կետով, մայիս ամսվա ցուցանիշը՝ 0.9 տոկոսային կետով, իսկ հունվար-մայիս ամիսների կուտակային աճի ցուցանիշը՝ 0.4 տոկոսային կետով:

**Ապրանքների արտահանման ծավալը թռիչքաձև աճել է:** 2022թ. հունիսին արտահանման աճը կազմել է 68.1%՝ մայիսի համեմատ գրեթե կրկնապատկվելով: Արտահանման աճի տեմպի նմանատիպ արագացումը կարող է պայմանավորված լինել վերաարտահանման երևույթով: Այսինքն՝ որոշ ապրանքներ ներմուծվում են Հայաստան և վերաարտահանվում:

2022թ. հունվար-մայիս ամիսների տվյալներով<sup>5</sup> արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի համապատասխանաբար 73.9% և 54.4% աճերով, որոնց նպաստումները կազմել են 7.2 և 6.2 տոկոսային կետ: Արտահանմանը էական նպաստում են ունեցել նաև «պատրաստի սննդի արտադրանք» և «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերի արտահանման աճերը՝ համապատասխանաբար 3.4 և 2.7 տոկոսային կետով:

**Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ<sup>6</sup>, %**



**Ներմուծման ծավալների աճի տեմպը նույնպես կտրուկ արագացել է:** 2022թ. հունիսին ներմուծման աճը կազմել է 73.1%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով շուրջ 17.4 տոկոսային կետով: Հունվար-հունիս ամիսների աճի ցուցանիշը նույնպես էականորեն արագացել է՝ հասնելով 48.7%-ի՝ նախորդ ամսվա 43.0%-ի դիմաց: Ներմուծման աճի տեմպն էականորեն գերազանցում է

<sup>5</sup> 2022թ. հունվար-հունիս ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

<sup>6</sup> ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է ներմուծման նախորդ ամիսներին հրապարակված ցուցանիշները, ինչի արդյունքում 2022թ. ապրիլ ամսվա ցուցանիշը բարելավվել է 0.1 տոկոսային կետով, մայիս ամսվա ցուցանիշը՝ 2.9 տոկոսային կետով, իսկ հունվար-մայիս ամիսների կուտակային աճի ցուցանիշը՝ 0.8 տոկոսային կետով:

արտահանման աճին, ինչը նշանակում է, որ առևտրային հաշվեկշիռը (արտահանման և ներմուծման տարբերությունը) շարունակում է վատթարանալ:

Ներմուծման աճին նպաստել են գրեթե բոլոր ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճերը (հունվար-մայիս ամիսների տվյալներով<sup>7</sup>), որոնցից առավել նշանակալի է եղել «հանքահումքային արտադրանք», «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի ներմուծումը, որոնք ընդհանուր ներմուծմանն ունեցել են համապատասխանաբար 6.8, 5.5, 4.9 և 3.6 տոկոսային կետ դրական նպաստում:

### 3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

**2022թ. հունվար-մայիսին անվանական աշխատավարձի աճի տեմպը շարունակել է մնալ բարձր<sup>8</sup>, սակայն գնաճի արագացման պայմաններում իրական աշխատավարձի աճը մնացել է ցածր մակարդակում:** Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում հունվար-մայիս ամիսներին նախորդ տարվա համեմատ աճել է 10.1%-ով՝ կազմելով 215,228.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է 4.0%-ով և կազմել 174,273.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 11.8%-ով՝ կազմելով 233,628.0 դրամ:


Միևնույն ժամանակ, 2022թ. հունվար-մայիսին սպառողական գների միջին մակարդակն աճել է 7.7%-ով, ինչի պայմաններում իրական աշխատավարձի աճը կազմել է ընդամենը 2.2%:

<sup>7</sup> 2022թ. հունվար-հունիս ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

<sup>8</sup> Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, հունիսի տվյալները դեռևս չեն հրապարակվել:






**Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2021-2022թթ. հունվար-մայիսին, %**



**4. ՓՈՒՍԱՐԺԵՔ**

**Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)**






**ՀՀ դրամի արժևորման տեմպը շարունակվում է:** ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ 2022թ. հունվար-հունիսին արժևորվել է շուրջ 11.5%-ով, իսկ եվրոյի նկատմամբ՝ 22.6%-ով: Ռ-Դ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժևորման տեմպը վերջին ամիսներին դանդաղել է՝ կապված Ռ-Դ ռուբլու դիրքերի ամրապնդման հետ, և հունվար-հունիսին կազմել է 10.8%:

ՀՀ դրամի արժևորման տեմպը որոշակիորեն մեղմվել է հուլիսին՝ կայունանալով 410-420 դրամի սահմաններում: Բնականաբար, նման ցածր փոխարժեքն էական խնդիրներ է առաջացնում ինչպես ապրանքներ և ծառայություններ արտահանողների, այնպես էլ տեղական արտադրողների համար, ովքեր խնդիր ունեն մրցակցելու ներմուծվող ապրանքների մասով:

**Գծապատկեր 11. ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի անվանական փոխարժեքի օրական միտումները և ՀԲ շուկայական գործառնությունների տոկոսադրույքը 2022թ. ընթացքում**




## 5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ<sup>9</sup>

### 5.1. Բյուջեի եկամուտները

**Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճի տեմպը մնում է բարձր մակարդակում:** Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2022թ. հունվար-հունիսին աճել են 24.3%-ով՝ նախորդ ամսվա 24.0%-ի փոխարեն: Հարկային եկամուտների աճը կազմել է 23.7%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.5 տոկոսային կետով: Պետական բյուջեի ոչ հարկային եկամուտները 2022թ. հունվար-հունիս ամիսներին աճել են շուրջ 39.0%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ շուրջ 1.0%-ով:

**Գծապատկեր 12. Հարկային եկամուտների կուտակային աճը, %**



Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է շահութահարկի (աճը՝ 49.4%), ավելացված արժեքի հարկի (աճը՝ 18.8%) և պետական տուրքի (աճը՝ շուրջ 3.5 անգամ) աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր հարկերի աճին կազմել են համապատասխանաբար 7.2, 6.1 և 5.8 տոկոսային կետ:

Հարկ է նշել, որ ԵԱՏՄ մաքսատուրքերի ստացման հետ կապված խնդիրները (տեխնիկական խնդիրների պատճառով ԵԱՏՄ ընդհանուր «կաթսայից» մաքսատուրքերը ՀՀ-ն չի ստանում) դեռևս առկա են, ինչի արդյունքում հունվար-

<sup>9</sup> Պետական բյուջեի ցուցանիշների աճերի հաշվարկն իրականացվել է դրանց «հազար դրամներով» արտահայտված ցուցանիշների կիրառմամբ: Գծապատկերներում ներկայացված «մլրդ դրամ» արտահայտությամբ ցուցանիշների կիրառման դեպքում աճի ցուցանիշները կարող են փոքր-ինչ տարբեր լինել:


հունիս ամիսներին մաքսատուրքերի գծով մուտքերը նվազել են շուրջ 63.6%-ով՝ ընդհանուր հարկերի աճին հակազդելով շուրջ 3.6 տոկոսային կետով:

**Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների**

|   | 2021թ.<br>հունվար-հունիս |                                | 2022թ.<br>հունվար-հունիս |                                |
|---|--------------------------|--------------------------------|--------------------------|--------------------------------|
|   | Աճը, %                   | Նպաստումը,<br>տոկոսային<br>կետ | Աճը, %                   | Նպաստումը,<br>տոկոսային<br>կետ |
| <b>Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք</b> | <b>10.3</b>              | <b>10.3</b>                    | <b>23.7</b>              | <b>23.7</b>                    |
| ԱԱՀ   | 13.6                     | 4.3                            | 18.8                     | 6.1                            |
| Շահութահարկ   | 11.8                     | 1.7                            | 49.4                     | 7.2                            |
| Եկամտային հարկ                                      | 1.9                      | 0.6                            | 8.0                      | 2.3                            |
| Ակցիզային հարկ                                      | -16.9                    | -1.3                           | 12.7                     | 0.7                            |
| Շրջանառության հարկ                                  | -2.2                     | 0.0                            | 27.4                     | 0.5                            |
| Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար             | 17.0                     | 0.7                            | 55.7                     | 2.5                            |
| Մաքսատուրք  | 42.4                     | 1.9                            | -63.6                    | -3.6                           |
| Սոցիալական վճար                                     | 90.5                     | 1.4                            | 44.2                     | 1.2                            |
| Այլ հարկային եկամուտներ                             | 84.0                     | 1.4                            | 17.9                     | 0.5                            |
| Պետական տուրք                                       | 12.4                     | 0.3                            | 257.3                    | 5.8                            |

## 5.2. Բյուջեի ծախսերը


**Գծապատկեր 13. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ**



**Պետական բյուջեի ծախսերի աճն էականորեն զիջել է եկամուտների աճին:** 2022թ. հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են շուրջ 5.1%-ով: Ծախսերի աճը պայմանավորված է ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի աճերով: Ընթացիկ ծախսերի աճի տեմպը բավական ցածր է եղել՝ կազմելով 3.0%, իսկ կապիտալ ծախսերն աճել են 25.9%-ով՝ կազմելով 97.1 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ կապիտալ ծախսերի պլանը 2022թ. առաջին կիսամյակի համար կազմում է 139.7 մլրդ դրամ, ինչը նշանակում է, որ կապիտալ ծախսերը թերակատարվել են շուրջ 40 մլրդ դրամով կամ 28.6%-ով:

### 5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

**Գծապատկեր 14. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ**



**Պետական բյուջեի հավելուրդը մեծացել է:** 2022թ. հունվար-հունիս ամիսներին կառավարության կողմից հավաքագրված եկամուտներն էականորեն գերազանցել են ծախսերի ծավալը, ինչի արդյունքում ձևավորվել է բյուջեի հավելուրդ շուրջ 72.4 մլրդ դրամի չափով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ձևավորվել էր շուրջ 75.5 մլրդ դրամ պակասուրդ: Հետևաբար նախորդ տարվա համեմատ հավելուրդային բյուջեն էական զսպող ազդեցություն է ունենում տնտեսական ակտիվության վրա:


### 5.4. Պետական պարտք

2022թ. հունիսի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 9,931.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա հունիսի նկատմամբ աճելով 12.0%-ով: Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես զգալիորեն աճել է՝ կազմելով 9,389.9 մլն ԱՄՆ դոլար և 2021թ. նույն ամսվա համեմատ ավելանալով 11.8%-ով: Պարտքի աճը հիմնականում պայմանավորված է եղել ներքին պարտքի աճով, իսկ արտաքին պարտքը նվազել է շուրջ 4.1%-ով: Տարեսկզբի համեմատ կառավարության պարտքն աճել է 7.1%-ով կամ 622.0 մլն ԱՄՆ դոլարով՝ պայմանավորված ներքին պարտքի աճով:

Վերջին ամիսներին ԿԲ-ի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքն անփոփոխ թողնելու պայմաններում պետական պարտատոմսերի տոկոսադրույքները ևս էական աճ չեն գրանցել, սակայն մնացել են բարձր մակարդակում: Կարճաժամկետ տոկոսադրույքները հունիսին կազմել են 10.6%, իսկ միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը՝ 11%, որոնք նախորդ տարվա

Նույն ամսվա համեմատ ավել են համապատասխանաբար 3.2 և 2.6 տոկոսային կետով:


**Գծապատկեր 15. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %**



## 6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

### 6.1. Գնաճ

**Գծապատկեր 16. 12-ամսյա գնաճ, %**




**Գնաճի տեմպը շարունակում է արագանալ մեծ քայլերով:** Հունիսին գնաճի տեմպը կազմել է 10.3%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.3 տոկոսային կետով: Ընդ որում, նախորդ ամիսներին գնաճը նույնպես մեծ քայլերով էր արագացել: Ըստ ՀՀ ԿԲ-ի հաղորդումների՝ գնաճի տեմպը առաջիկա ամիսներին կշարունակի արագանալ, սակայն մինչև տարեվերջ կկայունանա 8%-ից բարձր մակարդակում:

Ընդ որում, սննդամթերքի գների աճը հունիսին կազմել է 17.1%, ինչը էապես ազդում է ցածր եկամուտ ունեցող քաղաքացիների վրա, քանի որ սննդամթերքը նրանց սպառողական զամբյուղում բավական մեծ դեր ունի:

## 6.2. Ավանդներ


**Գծապատկեր 17. Ավանդների 12-ամսյա աճը, %**



**2022թ. հունիսին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալները աճել են:** 2022թ. հունիսի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալները նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել են 8.0%-ով՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.7 տոկոսային կետով: Ավանդների աճն ապահովվել է ռեզիդենտների ավանդների շուրջ 10.3% աճով, իսկ ոչ ռեզիդենտների ավանդների ծավալն աճել է զգալիորեն ավելի քիչ՝ 1.2%-ով:



### Գծապատկեր 18. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին շուրջ 4.5 տոկոսային կետով դրական նպաստում է ունեցել տնային տնտեսությունների ավանդների 9.9% աճը, իսկ ձեռնարկությունների ավանդների աճի տեմպը կազմել է 11.8%՝ ընդհանուր ավանդների աճին նպաստելով 2.3 տոկոսային կետով:

### 6.3. Վարկեր


2022թ. հունիսին վարկերի աճի տեմպը փոքր-ինչ արագացել է: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2022 թվականի հունիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 1.7%-ով:

### Գծապատկեր 19. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները նվազել են շուրջ 2.1%-ով և ընդհանուր վարկերին ունեցել 0.1 տոկոսային կետով բացասական նպաստում: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները աճել են 1.9%-ով և վարկերի ընդհանուր ծավալին ունեցել 1.8 տոկոսային կետ դրական նպաստում:

**Գծապատկեր 20. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %**



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը հիմնականում պայմանավորված է տնային տնտեսությունների վարկերի շուրջ 8.5% աճով, մինչդեռ իրավաբանական անձանց վարկերը շարունակում են նվազել:


**Գծապատկեր 21. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ**



Վարկերի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի<sup>10</sup> ուսումնասիրելու պարագայում կարող ենք նկատել, որ վարկերի աճին դրական նպաստում են ունեցել հիմնականում հիփոթեքային վարկերը, որոնց նպաստման չափը կազմել է 4.6 տոկոսային կետ: Գյուղատնտեսության ոլորտի վարկերի աճն արագացել է վերջին ամիսներին՝ հունիսին կազմելով 19.3% և ընդհանուր վարկերի աճին նպաստելով 1.0 տոկոսային կետով: Շինարարության ոլորտին տրամադրվող վարկերը նույնպես աճում են և ընդհանուր վարկերի աճին ունեցել են 0.6 տոկոսային կետով դրական նպաստում:

#### 6.4. Դրամական փոխանցումներ

**Գծապատկեր 22. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը<sup>11</sup>**



**Վերջին ամիսներին կտրուկ աճել են նաև արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների ծավալները:** Այսպես, 2022թ. մայիսին բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կազմել է 265.9 մլն ԱՄՆ դոլար, ինչը շուրջ 3.4 անգամ գերազանցում է նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշը: Հունվար-մայիս ամիսներին դեպի ՀՀ փոխանցված գումարների ծավալը շուրջ 2 անգամ է գերազանցում նախորդ տարվա նույն ցուցանիշը: Ընդ

<sup>10</sup> Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

<sup>11</sup> Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումների տարբերությունը ԱՄՆ դոլարով:

որում, էական աճ է գրանցվել ՌԴ-ից կատարվող փոխանցումների մասով, որոնք հունվար-հունիսին աճել են շուրջ 3.6 անգամ:

## 7. ԱՄՓՈՓՈՒՄ

**1. Ռուս-ուկրաինական հակամարտության պայմաններում Հայաստան ներհոսող կապիտալը և աշխատուժը էական դրական ազդեցություններ են ունենում ՀՀ տնտեսության վրա:** Տնտեսական ակտիվության ցուցանիշն էականորեն արագացել է մայիս-հունիս ամիսներին՝ գերազանցելով 10% շեմը և դառնալով երկնիշ: Այսպիսի դրական զարգացումները պայմանավորված են ՌԴ-ից դեպի Հայաստան ներհոսող կապիտալի և աշխատուժի ծավալներով, որոնք դրական ազդեցություն են ունենում ՀՀ-ում պահանջարկի վրա՝ հանգեցնելով ծառայությունների և առևտրի կտրուկ աճերին:

**2. Ներկա բարձր տնտեսական ակտիվության աճ ապահովող գործոնները կարող են ժամանակավոր լինել:** Պայմանավորված աշխարհաքաղաքական գործոնների փոփոխություններով՝ ՀՀ տնտեսության վրա դրական ազդեցություն ունեցող գործոնները ևս կարող են փոխվել: Հետևաբար, ներկա դրական իրավիճակը պետք է օգտագործել տնտեսությունում արտադրական հնարավորությունները և տնտեսության ներուժը բարձրացնելու համար, որպեսզի դրական շուկի վերացումից հետո տնտեսական ճգնաժամի ռիսկեր չլինեն: Սակայն, ներկայումս նման միտումներ չեն նկատվում, և կառավարության կողմից առկա ռեսուրսը տնտեսական զարգացմանն ուղղելու տեսանելի քայլեր չեն իրականացվում:

**3. Էական աճ է նկատվում դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների ծավալներում:** Հատկապես ՌԴ-ից փոխանցվող դրամական միջոցները կտրուկ աճել են, ինչն անվանական փոխարժեքի արժևորման էական գործոններից է: Հետևաբար, այստեղ նույնպես անհրաժեշտ է պետական քաղաքականության՝ հատկապես կենտրոնական բանկի գործիքակազմի կիրառումը, որպեսզի աճող տրանսֆերտները բացասական ազդեցություն չունենան ֆինանսական համակարգի վրա:

**4. Գների աճի արագացումը շարունակում է մնալ սոցիալ-տնտեսական իրավիճակը վատթարացնող և անորոշությունները մեծացնող գործոն:** Գների աճի տեմպը հունիսին հասել է 10.3%-ի և կանխատեսվում է, որ հետագա ամիսներին կարող է շարունակել աճել: Բարձր գնաճը հանգեցնում է բնակչության սոցիալական խնդիրների սրմանը՝ իրական եկամուտների կրճատման արդյունքում: Խնդրահարույց է սննդամթերքի գների էական աճը, ինչն

առաջացնում է սոցիալական խնդիրներ հատկապես ցածր եկամուտ ունեցող բնակչության համար:

**5. ՀՀ դրամը շարունակում է արժևորված մնալ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ:** ՀՀ դրամն էականորեն արժևորվել է 2022թ. ապրիլ-հունիս ամիսների ընթացքում, ինչը բացասաբար է անդրադառնում ՀՀ արտադրանքի գնային մրցունակության վրա: Թեև այդ պայմաններում արտահանման աճը կազմել է շուրջ 36.3%, սակայն ավելի հավանական է, որ այն վերաարտահանման արդյունք է, քանի որ ներմուծումը իր հերթին աճել է 48.7%-ով: Փոխարժեքի արժևորված լինելու պարագայում ոչ միայն տուժում են արտահանողները, այլև ներքին շուկայի համար արտադրողները, քանի որ նրանք խնդիր են ունենում մրցակցելու ներմուծված ապրանքների մասով, որոնց դեպքում փոխարժեքի արժևորումը հանդիսանում է գնային մրցունակությունը բարձրացնող գործոն:

---

**«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: